ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

17 օգոստոսի 2018թ. N 102

ք. Արմավիր

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 98-րդ հոդվածի առաջին մասով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի ա) կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 14.08.2018թվականի N 01/17.1/6122-18 հանձնարարականը.

***կարգադրում եմ՝***

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Է.Ղազարյան)՝ սահմանված կարգով ուսումնասիրել քաղաքացի Ա.Հովհաննիսյանի դիմումում նշված փաստական տվյալները և եռօրյա ժամկետում արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կ. Գրիգորյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

***ՄԱՐԶՊԵՏ՝*** Недействительная подпись ***Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ***

X

VERIFIED OCSP 17.08.2018 14:55:03 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի*
*մարզպետի 2018 թվականի օգոստոսի 17-ի*
*N 102 կարգադրության*

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

*Աշխատանքային խմբի ղեկավար՝*

Է.Ղազարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական.

*Անդամներ՝*

Ս.Սարգսյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ.

Ա.Ավչյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության, ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Վ.ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**